Բաց
կառավարման
գործընկերություն
ՀԱՅԱՍՏԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բաց
կառավարման
գործընկերություն
ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՉՈՐՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործողությունների ծրագիրը Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության կարևորագույն հիմնաքարերից մեկն է: Այն կառավարության և քաղաքացիական հասարակության համագործակցության արդյունքում սահմանված հանձնառությունների համախումբ է, որոնց իրականացումը պետք է խթանի աշխատանքների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հանրային մասնակցությունը:

Նախաձեռնության նպատակներին համահունչ գործողությունների ծրագրի արդյունավետ մշակման համար տվյալ ուղեցույցով ներկայացվում են այն հիմնական չափանիշերը, որոնց պետք է համապատասխանեն երկրների կողմից ստանձնվող հանձնառությունները:

Բաց կառավարման գործընկերությունը շեշտադրում է **հավակնոտ** հանձնառությունների միջոցով բաց կառավարման բարեփոխումներին ուղղված նախաձեռնությունների անհրաժեշտությունը: Գործողությունների ծրագրում ընդգրկվող նախաձեռնությունները կարող են լինել ինչպես նոր, այնպես էլ՝ նախկինում սկսված, ընթացիկ բարեփոխումների շարունակություն:

Հարկ է նշել, որ հանձնառությունները պետք է լինեն **հստակ և չափելի**՝ յուրաքանչյուրն **իրականացման որոշակի ժամկետայնությամբ**:

Առաջնահերթ պահանջ է գործողությունների ծրագրում ներառված յուրաքանչյուր **հանձնառության համապատասխանությունը ԲԿԳ հետևյալ չորս սկզբունքներից առնվազն մեկին՝**

1) **թափանցիկություն.** սա վերաբերում է պետության տնօրինած ամբողջ, այլ ոչ միայն կառավարության գործողությունների մասին տեղեկատվության պրոակտիվ և ռեակտիվ հրապարակմանը, տեղեկատվության ազատության մասին իրավունքի ամրապնդման մեխանիզմներին, կառավարությանը տեղեկությունների հասանելիությանը.

2) **հաշվետվողականություն.** գոյություն ունեն կանոններ, կարգավորումներ և մեխանիզմներ, որոնք կառավարման ոլորտի դերակատարներին կոչ են անում

հիմնավորել իրենց գործողությունները, գործել իրենց ուղղված պահանջներին ու քննադատությանն ի պատասխան, օրենքների և պարտավորությունների կատարման ձախողման դեպքում ընդունել պատասխանատվությունը: Այս խմբին վերաբերող հանձնառությունները սովորաբար ներառում են հաշվետու լինելու տարրը, այսինքն՝ մյուս կողմից պետք է ընդգրկեն նաև հանրությանը.

3) **մասնակցություն**. անհրաժեշտ է մոբիլիզացնել քաղաքացիներին, որպեսզի նրանք մասնակցեն կառավարման քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ երկխոսությանը, ապահովեն իրենց ներդրումն ու հետադարձ կապը, որոնք կհանգեցնեն ավելի պատասխանատու, նորարարական և արդյունավետ կառավարման.

4) **տեխնոլոգիա և նորարարություն**. կառավարություններն ընդունում են քաղաքացիների համար տեխնոլոգիաների հասանելիության և դրանցից օգտվելու նրանց կարողության զարգացման կարևորությունը, ինչպես նաև նորարարությունների իրականացման համար նոր տեխնոլոգիաների դերը: Ողջունելի են էլեկտրոնային կառավարմանը վերաբերող նախաձեռնությունները, սակայն դրանք Բաց կառավարման գործընկերության արժեքներին համապատասխան լինելու համար անհրաժեշտ է, որ գործողությունների ծրագիրը պարզաբանի, թե ինչպես են այդ նախաձեռնությունները նպաստում աշխատանքների թափանցիկությանը, հաշվետվողականությանը և հանրային մասնակցությանը:

SMART չափանիշերը

Specific- Measurable- Answerable- Relevant- Time-bound

Հանձնառություններից յուրաքանչյուրն իր հերթին պետք է լինի՝

1) հստակ (specific). հանձնառությունը հստակորեն նկարագրում է այն խնդիրը, որը փորձում է լուծել (ինչպես նաև խնդրի լուծման ուղղությամբ նախատեսվող գործողություններն ու ակնկալվող արդյունքները).

2) չափելի (measurable). չափելիության ապահովումը հնարավոր է դարձնում ստուգել հանձնառության իրականացումը: Այն դեպքում, երբ հանձնառությունն ունի մի քանի ենթախնդիր, ապա այն բաղդատվում է հստակ և չափելի ուղենիշերի.

3) պատասխանատու իրականացնողով (իրականացնողներով) (answerable). հանձնառությունը պարզորոշ սահմանում է հիմնական իրականացնող մարմինը (գործակալությունը), անհրաժեշտության դեպքում համակարգող կամ աջակցող գործակալությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ գործընկերների, որոնք մասնակցում են տվյալ հանձնառության իրականացմանը.

4) Բաց կառավարման գործընկերության սկզբունքներին համապատասխան. գործողությունների ծրագրում յուրաքանչյուր հանձնառության մասով պետք է պարզաբանվի, թե բաց կառավարման նշված չորս հիմնական սկզբունքներից որին (կամ որոնց) է այն համապատասխանում.

5) իրականացման որոշակի ժամկետով (time-bound). յուրաքանչյուր հանձնառության համար հստակորեն սահմանված են դրա իրականացման և ուղենիշերի ժամկետները, ինչպես նաև ցանկացած այլ վերջնաժամկետ: Թեև երկրի գործողությունների ծրագիրը մշակվում է երկամյա կտրվածքով, հանձնառությունները կարող են, իրենց բնույթից ելնելով, նախատեսվել երկու տարվանից ավելի կամ պակաս ժամկետով:

ԱՅԼ ՉԱՓԱՆԻՇԵՐ

Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան չորրորդ գործողությունների ծրագիրը մշակելիս նախապատվությունը կտրվի այն առաջարկներին, որոնք, բացի նշված Բաց կառավարման գործընկերության չափանիշերի համապատասխանությունից, միաժամանակ միտված կլինեն Միացյալ ազգերի կազմակերպության կողմից հաստատված Կայուն զարգացման նպատակների իրականացմանը և համահունչ կլինեն Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն,Հայաստանի թվային օրակարգ 2030 և Հայաստանի զարգացման 2030 ռազմավարություններին:

Այն առաջարկությունները, որոնք ենթադրում են նոր օրենքների նախագծերի մշակման և ընդունման, ինչպես նաև գործող օրենքներում փոփոխությունների կատարման պահանջ (նշված պահանջի ապահովումը դուրս է ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակից), գործողությունների ծրագրում չեն ընդգրկվի:

Առաջարկությունները պետք է ներկայացվեն սահմանված ձևաչափով (կցվում է):